ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3-2

ք. Երևան «08» հուլիս 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024040 ՀՎՀՀ 02505554	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ Ք.Երևան,Մյասնիկյան22/4 Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ ՀՀ 220083335012000 ՀՎՀՀ 08417829
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 08 » հուլիս 2019թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3-2 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
3	50111130-37	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	1500000	1	ք. Երևան, Մատակարարի կողմից նշված հասցե	Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո մինչև 15.12.2019թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ

Ք.Երևան,Մյասնիկյան22/4
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՀ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 08 » հուլիս 2019թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀՇՁԲ-19/3-2 ծածկագրով պայմանագրի

ԳՆԱՑՈՒՅԱԿ

Հ/Հ	ՏՍ-1,ՏՍ-2 Ծառայությունների և ՏՍ-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին 3
		Շևրոլե Կապտիվա
1	2	3
	ՏՍ-1 ներառվող ծառայությունների անվանում	(ՀՀ դրամ)
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
	ՏՍ-1 ներառվող ծառայությունների անվանումը	
	1. Շարժիչ	
18	Շարժիչի հանում և տեղադրում	60000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
22	Շարժիչի վերանորոգում	110000
23	Նույնը DOHC դեպքում	0
24	Նույնը V6-ի դեպքում	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5000
27	Նույնը աջի համար (V6)	0
28	Նույնը ձախի համար (V6)	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	40000
30	Նույնը աջի համար (V6)	0
31	Նույնը ձախի համար (V6)	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	0
34	Փականի խցուկի փոխարինում	25000
35	Նույնը V6-ի դեպքում	0
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	20000
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0
39	Նույնը DOHC դեպքում	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	10000
41	Հրիչների փոխարինում SOHC	0
42	Նույնը DOHC դեպքում	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	30000
44	Նույնը DOHC դեպքում	0
45	Նույնը V6-ի դեպքում	0
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0

48	Նույնը DOHC դեպքում	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
50	Նույնը V6-ի դեպքում	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
52	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	30000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
54	Մխոցային օղակների փոխարինում	50000
55	Նույնը DOHC դեպքում	0
56	Նույնը V6-ի դեպքում	0
57	Թափանիվի հանում և տեղադրում	2000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000
59	Յուղի պոմպի փոխարինում	30000
60	Նույնը DOHC դեպքում	0
61	Նույնը V6-ի դեպքում	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	50000
63	Բռնկման կարգավորում	1000
64	CO կարգավորում	1000
65	խարնարակի հանում և տեղադրում	0
66	Խարնարակի վերանորոգում	0
67	Օդի զտիչի փոխարինում	1000
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	20000
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	16000
70	Բենզամղիչի փոխարինում	10000
71	Վառելիքի զտիչի փոխարինում	800
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	5000
73	Տրամլյորի հանում և տեղադրում	0
74	Տրամլյորի վերանորոգում	0
	3. Սառեցման և արտածման համակարգ	
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում	0
76	Հովհարի հանում և տեղադրում	5000
77	Ռադիատորի հանում և տեղադրում	8000
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
80	Ռադիատորի վերանորոգում	45000
81	Թերմոստատի փոխարինում	12000
82	Ջրի պոմպի փոխարինում	13000
83	Նույնը DOHC և V-6 դեպքում	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
85	Ջրի պոմպի վերանորոգում	0
86	Նույնը DOHC դեպքում	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
88	Ընդարձակող բաքի փոխարինում	2000
89	Խլարարի հանում և տեղադրում	6000
90	Նույնը DOHC դեպքում	0
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	5000
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	8000
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	30000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	0
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	40000
98	ՓՏ-ի վերանորոգում	60000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5000
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0
101	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	4000
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	80000
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	90000

104	Նույնը V6-ի համար	0
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	60000
106	Նույնը V6-ի համար	0
107	ԱՓՏ-ի վերանորոգում	200000
108	Նույնը V6-ի համար	0
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	15000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	15000
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	50000
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	12000
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	6000
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	15000
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	10000
116	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	5000
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	5000
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	25000
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	20000
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	15000
121	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	10000
	7. Կախոց	
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
123	Տրավերսի հանում և տեղադրում	12000
124	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	8000
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
129	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	6000
130	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	0
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	6000
132	Զսպանակի հանում և տեղադրում	0
133	Զսպակի հանում և տեղադրում	0
134	Զսպակի վռանների փոխարինում	0
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7000
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում	9000
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	9000
138	Առջևի աջ կամ ձախ ծգանների հանում և տեղադրում	6000
139	Միջին ծգանի հանում և տեղադրում	0
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	5000
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	7000
143	Գնդե հոդակապերի փոխարինում	7000
144	Ծայրակաների հանում և տեղադրում	6000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0
148	Հետևի զսպանակի փոխարինում	0
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000
150	Հետևի ծգածողի հանում և տեղադրում	0
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	8000
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	6000
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	4000
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	5000
155	Անվաբացքի կարագավորում	5000
156	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	500
	8. Ղեկային մեխանիզմ	
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում	15000
158	Նույնը V6-ի համար	0

159	Ղեկային կալունի վերանորոգում	120000
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0
161	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	0
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	5000
163	Նույնը DOHC դեպքում	0
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	0
165	Նույնը DOHC դեպքում	0
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5000
167	Նույնը DOHC դեպքում	0
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
	9. Արգելակային համակարգ	
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում	5000
172	Գլխ. գլանի վերանորոգում	5000
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	10000
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3000
175	Բանվ. գլանի վերանորոգում	5000
176	Արգելակային համակարգի օդահանում	1000
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	2000
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	2000
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	4000
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	4000
181	Արգելակային փողրակի փոխարինում	5000
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000
184	Հետևի կոճղակների փոխարինում	6000
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	7000
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	8000
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0
188	ABS-ի հանում և տեղադրում	10000
189	ABS-ի վերանորոգում	10000
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	5000
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	7000
	10. Էլեկտրասարքավորում	
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	25000
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	1000
194	Գեներատորի հանում և տեղադրում	10000
195	Նույնը V6-ի դեպքում	0
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
197	Գեներատորի վերանորոգում	10000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	8000
199	Մեկնարկիչի վերանորոգում	10000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	4000
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	5000
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3000
203	Վազքաչափի հանում և տեղադրում	1000
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	1000
205	Սաքերի պանելի հանում և տեղադրում	1000
206	Արագաչափի հանում և տեղադրում	0
207	Ազդանշանի հանում և տեղադրում	3000
208	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	2900
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	2000
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	1000
211	Մագնիտոլայի տեղադրում	0
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	4000
213	էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	10000
214	էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	15000
215	էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	12000

216	էլեկտրական տվիչների փոխարինում	1000
217	էլեկտրական անջատիչների փոխարինում	1000
218	Վառոցքի մոմերի փոխարինում	8000
219	Կոնդիցիոների լիցքավորում	20000
220	Կոնդիցիոների վերանորոգում	20000
	11. Այլ ծառայություններ	
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	9000
222	Ավտոմեքենայի լվացում	1000
223	Անիվի հանում և տեղադրում	1000
224	Անվադողի վերանորոգում	1000
225	Անիվի բայանսավորում	1500
226	Անիվի վալց	1000
227	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	800
228	Խառատային աշխատանքներ	3000
229	Փականագործի աշխատանքներ	3000
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	1000
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1.Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	250000
2	Շարժիչի գլխիկ	220000
3	Բարձիկ	40000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	25000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	110000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
7	Շարժիչի փական դուրս մղող	10000
8	Շարժիչի փական ներս մղող	10000
9	Շարժիչի փականի խցուկ	2000
10	Ծնկաձև լիսեռ	185000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	10000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	15000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	35000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	35000
15	Հենակային տափողակ	5000
16	Մխոց	20000
17	Մխոցային օղակներ	50000
18	Ատամնանիվ	2000
19	Ատամնավոր փոկ	40000
20	Շղթա	70000
21	Հիդրոծգան	25000
22	Հրիչ	8000
23	Հիդրոհրիչ	15000
24	Բաշմակ	22000
25	Հանգստարար	22000
26	Թափանիվ	0
27	Թափանիվի պսակ	0
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	7000
29	Շկիվ	0
30	Շարժաթև	45000
31	Կարտերի միջադիր	0
32	Միջադիր	0
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2500
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	7000
36	Յուղի զտիչ	10000
37	Յուղի պոմպ	70000
38	Յուղի պոմպի շարժաբեր	0
39	Յուղի ռադիատոր	0

40	Յուղի փողրակ	0
41	Յուղի ծորակ	0
42	Վառոցքի մոմ	9000
43	Բենզոբաք	0
44	Խառնարակ	0
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	25000
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	45000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0
49	Վառելանյութի զտիչ	20000
50	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	0
51	Վառելանյութի փողրակ	5000
52	Աքսելերատորի ճոպան	0
53	Օդի զտիչ	10000
54	Ջերմաստիճանային տվիչ	0
55	Յուղի տվիչ	1000
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	1000
57	Օդի ծախսի տվիչ	5000
58	Արագաչափի տվիչ	1000
59	Հովհարի տվիչ	1000
60	Ջրի տվիչ	1000
61	Բենզոբաքի տվիչ	1000
62	Մարման ընթացքի կարգավորիչ	500
63	Մարման ընթացքի տվիչ	1000
64	Ղեկավարման համակարգիչ	1000
65	Պարապ ընթացքի տվիչ	100
66	Դրոսելային փականի տվիչ	1000
67	Թթվածնի տվիչ	1000
	3. Սառեցման և արտածման համակարգ	
68	Հովհարի փոկ	0
69	Հովհար	20000
70	Ռադիատոր	110000
71	Ընդարձակող բաք	15000
72	Ռադիատորի փողրակ	16000
73	Թերմոստատ	12000
74	Ջրի պոմպ	100
75	Ջրի պոմպի առանցքակալ	500
76	Ջրի պոմպի թևակ	500
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	2000
78	Ջրի պոմպի սռնանիվ	500
79	Հոլովակ	20000
80	Փոկ	16000
81	Փոկ կոնդիցիոների	1000
82	Ծորակ	1000
83	Խլարարի ներդիր	4000
84	Խլարարի կախոց	4000
85	Կրոնշտեյն	5000
86	Անուր (Խամուտ)	1000
87	Խլարար	40000
88	Ռեզոնատոր	1000
89	Վառարանի ռադիատոր	60000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
90	Կցորդման բանվորական գլան	25000
91	Կցորդման գլխավոր գլան	35000
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	5000
93	Կցորդման տանող սկավառակ	60000
94	Կցորդման տարվող սկավառակ	40000
95	Կցորդման առանցքակալ	25000
96	Կցորդման փողրակ	20000

97	Փոխանցման տուփ	900000
98	ՓՏ-ի առջևի խցուկ	5000
99	ՓՏ-ի հետևի խցուկ	8000
100	ՓՏ-ի առանցքակալ	15000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	85000
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	80000
103	ՓՏ-ի եղանիկ	19000
104	ՓՏ-ի ատամնանիվ	20000
105	Համաժամիչ	20000
106	Մուֆտ	30000
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1000
108	ԱՓՏ-ի զտիչ	25000
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	300000
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	60000
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	6000
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	7000
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	100
114	Հերմետիկ	2000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
115	Բաշխիչ տուփ	5000
116	Բաշխիչ տուփի խցուկ	6000
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	18000
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	25000
119	Բաշխիչ տուփի լիսեռ	5000
120	Կարդանային լիսեռ	20000
121	Էլաստիկ մուֆտ	15000
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	40000
123	Կարդանային լիսեռի խաչուկ	25000
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
124	Հետևի կամ առջևի կամրջակ	1000
125	Ռեդուկտոր	1000
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	1000
127	Դիֆֆերենցիալ	5000
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	5000
129	Տանող ատամնանիվի խցուկ	4000
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	14000
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	15000
132	Կիսասռնի	1000
133	Կիսասռնու առանցքակալ	20000
134	Կիսասռնու միջադիր	4000
135	Կիսասռնու խցուկ	5000
136	Կարգավորիչ տափողակ	4000
	7. Կախոց	
137	Տրավերս	1000
138	Կրոնշտեյն	2000
139	Ձախ կամ աջ հոդակապ	90000
140	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	15000
141	Անվակունդ	55000
142	Անվակունդի խցուկ	7000
143	Անվակունդի ներքին առանցքակալ	22000
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	24000
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	1000
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	1000
147	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	7000
148	Հարվածամեղմիչի թասակ	25000
149	Ձսպանակ	1000
150	Առջևի հարվածամեղմիչ	60000
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	15000
152	Հարվածամեղմիչի վռան	500

153	Ներքևի լծակ	40000
154	Ներքևի լծակի վռան	6000
155	Վերևի լծակ	35000
156	Վերևի լծակի վռան	6000
157	Գնդե հոդակապ	15000
158	Առջևի կայունարար	0
159	Առջևի կայունարարի վռան	8000
160	Առջևի կայունարարի առջևի վռան	5000
161	Հետևի զսպանակ	1000
162	Հետևի ցնցամեղմիչ	60000
163	Հետևի մետաղածող (շտանգա)	5000
164	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	10000
165	Հետևի անկյունագծային լծակ	1000
166	Անկյունագծային լծակի վռան	1000
167	Զսպակ (ռեսսորա)	0
168	Զսպակի վռան	0
169	Զսպակի միջադիր	0
170	Զսպակի բռնիչ	0
171	Աջ կամ ձախ ծգան	15000
172	Ծայրակալ	15000
173	Ձգան մեջտեղի	20000
174	Անվահեծ	0
	8. Ղեկային մեխանիզմ	
175	Ղեկային կալուն	350000
176	Ղեկային կալունի առանցքակալ	1000
177	Ղեկային կալունի խաչուկ	1000
178	Հիդրոուժեղարար	10000
179	Հիդրոուժեղարարի փոկ	8000
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	18000
181	Հիդրոուժեղարարի պոմպ	5000
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	8000
183	Ղեկային ծող	20000
184	Ղեկային ծողի ծայրակալ	8000
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5000
186	Ճոճանակ	100
187	Ճոճանակի վռան	100
	7. Արգելակային համակարգ	
188	Գլխ. գլան	1000
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000
190	Վակուումային ուժեղարար	45000
191	Բանվ. գլան	1000
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1000
193	Արգելակային փողրակ	8000
194	Սուպպորտի ուղղորդիչ	1000
195	Սուպպորտի մանժետ	1000
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	30000
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	25000
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	30000
199	Առջևի արգելակային սկավառակ	45000
200	Հետևի արգելակային սկավառակ	45000
201	Ձեռքի արգելակի ճոպան	15000
202	ABS-ի տվիչ	15000
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	5000
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2000
205	Ձեռքի արգելակի ճոպան	0
	9. Էլեկտրասարքավորում	
206	Գեներատոր	100000
207	Գեներատորի դիոդային կամրջակ	30000
208	Գեներատորի ռելե	20000

209	Գեներատորի առանցքակալ	10000
210	Ստարտեր	100000
211	Ստարտերի ռելե	5000
212	Ստարտերի ածուխ	5000
213	Բենդեքս	25000
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	25000
215	Առջևի լապտեր	2000
216	Առջևի թարթիչ	2000
217	Հետևի լապտեր	1000
218	Հետևի թարթիչ	2000
219	Արգելակային լապտեր	1000
220	Լամպ	8000
221	էլեկտրական անջատիչ	1000
222	էլեկտրական տվիչ	1000
223	էլեկտրական չափիչ սարք	1000
224	Բռնկման կողպեք	8000
225	էլեկտրալարերի գլխավոր խուրց	1000
226	էլեկտրալարերի երկրորդային խուրց	1000
227	Վառոցքային լարերի խուրց	25000
228	Վառոցքի մոմի ծայրակալ	7500
229	Վազքաչափ	100
230	Վազքաչափի ճոպան	100
231	Արագաչափ	100
232	Ազդանշան	3000
233	Ապակելվացիչ	3000
234	Ապակելվացիչի շարժիչ	15000
235	Դռների կենտրոնական փական	3000
236	Ազդանշանային համակարգ	2100
237	Մագնիտոլա	100
238	էլեկտրաամբարձիչ	1000
239	էլեկտրաամբարձիչի շարժիչ	1000
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորգման համար	7000

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝
SU – 1 ծառայություն / տեխ. զննում ըստ հավելվածի/
SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում ըստ հավելվածի/:

1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը:

2 - տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում: Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի ամբարձիչներով (ծոռքրատ)՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ երեք օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ

Ք.Երևան,Մյասնիկյան22/4
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՀ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 08 » հուլիս 2019 թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3-2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	50111130-37	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	-	-	975000	975000	975000	1500000	1500000	1500000	1500000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ

Ք.Երևան,Մյասնիկյան22/4
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
ՀՀ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«08» հուլիս 2019թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3-2 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 08 » հուլիս 2019թ. կնքված
ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-19/3-2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն